ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

e-mail:ararathnaberd@yandex.ru

հեռ. 098025050

ՈՐՈՇՈՒՄթիվ 22-Ն

06 դեկտեմբերի 2012 թվական

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10,11 ,ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդհոդվածի 18 կետի պահանջներով, համայնքիավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հնաբերդ համայնքում 2013թ.-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների(ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

հիմնական օբյեկտների համար՝

1)մինչև 300 քառակուսի մետր (այսուհետև քմ)ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ

2)սույն կետի «1 » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝15000 դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

գ. 1001 և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝35000 դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3)մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

4)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ,ուժեղացման , վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճանապարհապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա)հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝1000 դրամ,

2)բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի«1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացմամբ կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների, այդ թվում ստորգետնյա, շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրյաքանչյուր եռամսյակի համար՝1500 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ,

2) հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում , հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլ-տվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

3)խանութներում , կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլ-տվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ:

6. Համայնքի տաածքում առևտրի , հանրային սննդի , զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման, օբյեկտները, բաղնիքները (սաու-նաները), խաղատները ժամը 24:00 –ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

1)առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝50000 դրամ,

3) բաղնիքների(սաունաների) համար՝ 200000 դրամ,

4) խաղատների կազմակերպման համար՝500000 դրամ,

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝250000 դրամ,

6)վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու համար 1 քմ – ի տեղական տուրքը սահմանվում է

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտա-դրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանքի գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ,

3)այլ արտաքին գովազդի համար՝1500 դրամ

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ,

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու(բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու համար սահմանվում է 10000 դրամ:

10. Հնաբերդ համայնքի տեղական վճարների դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքինը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների համար փոխհատուցման վճար՝1000 դրամ,

2)տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ

3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված զանազան ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 1000 դրամ,

4)աղբակույտերը և շինարարական աղբը հեռացնելու համար վճար՝ 200 դրամ:

Համայնքի ավագանի՝

Գ. Կիրակոսյան

Դ. Դավթյան

Մ. Զաքարյան

Վ. Սիմոնյան

Համայնքի ղեկավար՝ / Մ. Դողուչյան /